

«Վավերացնում են»

Հայաստանի Հանրապետության

Նախագահի Ռ Բոլորյան

23 հունվարի 2007 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2006 թվականի N 1913-Ն

188 ԹԱՐՄ ՊՏՈՒՂ-ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵ- ԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի N 2200-Ն որոշման՝ N 1 հավելվածի 174-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգը համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո՝

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ա. Մարգարյան

2007 թ հունվարի 18
Երևան

Տ Ե Ն Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԹԱՐՄ ՊՏՈՒՂ-ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ

Լ. ԿԻՐԱՆՍԱՆ ՈԼՈՐՏԸ

1 Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի (այսուհետ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերով նախատեսված թարմ պտուղ-բանջարեղենի վրա

թարմ կախոտֆիլ	0701
թարմ տոմատ	070200000
թարմ զլուխ սոխ մանր սոխ սոխ-պրաս և սխտոր	0703
թարմ զլուխ կաղամբ ծաղկակաղամբ շաղգամակաղամբ սպիտակազլուխ և կարմրազլուխ կաղամբներ	0704
թարմ հազար և եղերդ	0705
թարմ զազար շաղգամ սեղանի ճակնդեղ (կարմիր ճակնդեղ)	
քոշմորուք նեխուր ամսական բողկ և համանման ուտելի	
այլ արմատապտուղներ	0706
թարմ վարունգ	070700050
թարմ լոբազգի բանջարեղեն, կեղևահան կամ կեղևով	0708
թարմ արտիճուկ	070990800
թարմ ծնեբեկ	070920000
թարմ սմբուկ	070930000
թարմ պղպեղ	070960
թարմ դոմիկ	070990700
թարմ կոկոսյան բրազիլական և կեչու ընկույզներ կճեպահանված կամ չհանված կեղևով կամ առանց կեղևի	0801
թարմ նուշ	0802
թարմ ադամաթուզ	080300
թարմ արմավ թուզ արքայախնձոր ավիկադո հնդկախնձոր (գուայավա) մանգո և մանգոստան	0804
թարմ ցիտրուսային պտուղներ	0805

թարմ խաղող	0806
թարմ սեխ (ճերատյալ ձմերուկը) և պապայա	0807
թարմ խնձոր տանձ և սերկևիլ	0808
թարմ ծիրան բալ և կեռաս դեղձ (ճերատյալ նեկտարինը)	
սալոր և մամուխ	0809
թարմ մորի և ելակ	081010000
թարմ արքայամորի մոշ թուֆ և հովտային հատապտուղներ	081020
թարմ հաղարջ սպիտակ և կոկոռ	081090500
թարմ հաղարջ սև և կարմիր	081090980
կիփի	081050000

2 Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են 1-ին կետով նախատեսված թարմ պտուղ-բանջարեղենի (այսուհետ պտուղ-բանջարեղեն) անվտանգությանը փաթեթավորմանը մակնշմանը փոխադրմանը և պահմանը ներկայացվող պահանջները

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3 Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են հետևյալ հասկացությունները *ճիտրատներ* ազոտական թթվի աղեր (ամոնիակային, մատրիումական կալիումական կալցիումական), որոնք կոչվում են նաև սելիտրաներ

պեստիցիդներ բոլոր այն թունավոր նյութերը որոնք գործադրվում են բույսերին վնասող բոլոր կարգի վնասատուների դեմ

ռադիոնուկլիդներ ատոմներ որոնք ունեն միջուկի միևնույն լիցքը (հետևաբար նույն քիմիական հատկությունները) բայց տարբեր թվով նեյտրոններ և ունեն ռադիոակտիվ ճառագայթներ արձակելու հատկություն

III ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

4 Թարմ պտուղ-բանջարեղենի մեջ թունավոր տարրերի պեստիցիդների, ճիտրատների և ռադիոնուկլիդների թույլատրելի մակարդակները չպետք է գերազանցեն 1-4-րդ աղյուսակներով սահմանված նորմերը

Աղյուսակ 1 Թարմ պտուղ-բանջարեղենում թունավոր տարրերի պարունակության թույլատրելի մակարդակները

Թունավոր տարրի անվանումը	Թույլատրելի մակարդակը մգ/կգ ոչ ամելի	Լրացումները
Կապար	0.5	
	0.4	մրգեր հատապտուղներ
Արսեն	0.2	
Կադմիում	0.03	
Սնդիկ	0.02	

Աղյուսակ 2. Թարմ պտուղ-բանջարեղենում պեստիցիդների պարունակության թույլատրելի մակարդակները

Պեստիցիդի անվանումը	Թույլատրելի մակարդակը, մգ/կգ, ոչ ավելի	Լրացումները
Հեքսաքլորոցիլոհեքսան (ՀԲՑՀ) (α- β- γ-ի իզոմերներ)	0,1	կարտոֆիլ, կանուս ոլոռ, բազուկ
	0,5	բոստանային մշակաբույսեր, բանջարեղեն
	0,05	մրգեր, հատապտուղներ, խաղող
Երկքլորերկֆենիլեթոքլորմեթիլմեթան (ԴՂՏ) և դրա մետաբոլիտները	0,1	

Աղյուսակ 3. Թարմ պտուղ-բանջարեղենում միտրատների պարունակության թույլատրելի մակարդակները

Մշակաբույսի անվանումը	Թույլատրելի մակարդակը, մգ/կգ, ոչ ավելի
Կարտոֆիլ	250
Կաղամբ՝ սպիտակաթելային, վաղահաս	900
Կաղամբ՝ սպիտակաթելային, ուշահաս	500
Գազար՝ վաղահաս	400
Գազար՝ ուշահաս	250
Տոմատ	150
Տոմատ (պաշտպանված գրունտ)	300
Վարունգ	150
Վարունգ (պաշտպանված գրունտ)	400
Սեղանի ճակնդեղ	1400
Գլուխ սոխ	80
Կանաչ սոխ	600
Կանաչ սոխ (պաշտպանված գրունտ)	800
Տերևաբանջարեղեն	2000
Տաքդեղ՝ քաղցր	200
Տաքդեղ՝ քաղցր (պաշտպանված գրունտ)	400
Դմիկ	400
Չմերուկ	60
Սեխ	90
Մրգեր	60

Աղյուսակ 4. Թարմ պտուղ-բանջարեղենում ռադիոնուկլիդների պարունակության թույլատրելի մակարդակները

Մշակաբույսի անվանումը	Ռադիոնուկլիդի անվանումը	Թույլատրելի մակարդակը, մգ/կգ, ոչ ավելի	Լրացումները
Կարտոֆիլ	ցեզիում-137	120	Բկ/կգ
	սարոնցիում-90	40	Բկ/կգ
Բանջարեղեն բոստանային	ցեզիում-137	120	Բկ/կգ
	սարոնցիում-90	40	Բկ/կգ
Մրգեր, հատապտուղներ, խաղող	ցեզիում-137	40	Բկ/կգ
	սարոնցիում-90	30	Բկ/կգ

IV ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

5 Թարմ պտուղ-բանջարեղենը պետք է փոխադրել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից չառգելված նյութերից պատրաստված տարաների մեջ

6 Տարալի անվանական տարողությունից շեղումները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Կշռածրարման, վաճառքի, ներմուծման ժամանակ ցանկացած տիպի փաթեթվածքներում չափածրարված ապրանքների քանակին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1928-Ն որոշմամբ սահմանված դրույթներին

7 Թարմ պտուղ-բանջարեղենի փոխադրման համար նախատեսված տարաները պետք է ապահովեն հետևյալ պահանջները

ա) համապատասխան փաթեթավորմամբ նվազագույնի հասցնել թարմ պտուղ-բանջարեղենի մեխանիկական վնասվածությունը ապահովելով որակական հատկանիշների պահպանությունը,

բ) հեշտությամբ մաքրվեն, լվացվեն և ախտահանվեն համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի «Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և այդ հիմքով պլաստմասսայե արտադրանքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 679-Ն որոշման, իսկ մնացած նյութերից պատրաստված տարաների համար Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության նորմատիվ իրավական ակտերի

8 Թարմ պտուղ-բանջարեղենի ախտոտումը և փչացումը կանխելու նպատակով, նախքան թարմ պտուղ-բանջարեղենի փոխադրումը, անհրաժեշտ է այն տեսակավորել ըստ պիտանելիության (սպառողի համար պիտանի և ոչ պիտանի)

9 Չի թույլատրվում թարմ պտուղ-բանջարեղենը փոխադրել նախկինում վնասակար նյութերի փոխադրման համար օգտագործված տրանսպորտային միջոցներով

10 Բերքահավաքի և բերքի տեղափոխման համար նախատեսված միջոցներն ու մեքենաները պետք է լինեն մաքրված և ախտահանված

V ՊԱՅՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

11 Թարմ պտուղ-բանջարեղենի պահումը պետք է կազմակերպել այնպիսի պայմաններում որոնք կապահովեն դրա անվտանգությունը և որակական ցուցանիշները

12 Օգտագործվող բեռնարկղերն ու սառնարանային սպահեստները պետք է լինեն մաքուր և ախտահանված

13 Փչացումը կանխելու համար պտուղ-բանջարեղենը կարող է պահվել սառնարանային պայմաններում, որի ռեժիմները և տևողությունը սահմանված են 5-րդ աղյուսակում, իսկ ծիրանը, կիվին մանգոն, պապայան դեղձը տանձը սալորը սեխը և պոմիդորը մինչև հասունանալը սենյակային ջերմաստիճանում այնուհետև սառնարանում

Աղյուսակ 5

ԹԱՐՄ ՊՏՈՒՂ-ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ՍԱՌՆԱՐԱՆՈՒՄ ՊԱՅՄԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՌԵԺԻՄՆԵՐԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պահպանվող պտղի (բանջարեղենի) անվանումը	Ջերմաստիճանը (°C)	Օդի հարաբերական խոնավությունը (%)	Պահպանման տևողությունը (օր)
1	2	3	4
Խնձոր			
ամառային	1-ից մինչև 3	85 - 90	մինչև 30

1	2	3	4
ծմեռային	0-ից մինչև մինուտ 2	85 - 90	150 - 240
Ծիրան	մինուտ 0,5	87 - 90	մինչև 30
Սերկևիլի	0	85 - 90	60
Ադամաթուզ			
կանաչ	14-ից մինչև 16	85 - 90	10 - 20
հասունացած	13-ից մինչև 14	85 - 90	5 - 10
Խաղող	0-ից մինչև մինուտ 1,5	85 - 95	30 - 180
Նուռ	մինուտ 1-ից մինչև մինուտ 2	87 - 90	60 - 90
Տանձ			
ամառային	մինուտ 0,5	85 - 90	մինչև 30
ծմեռային	մինուտ 1-ից մինչև մինուտ 2	85 - 90	120 - 150
Սեխ	0 - 1	85 - 90	60 - 90
Նարինջ			
հասունացած	3-ից մինչև 4	80 - 90	մինչև 150
կիսախակ վիճակում	5-ից մինչև 6	85 - 90	մինչև 150
Մանդարին	1-ից մինչև 2	85 - 90	60 - 90
Կիտրոն	2-ից մինչև 3	85 - 90	120 - 180
Դեղձ	մինուտ 0,5-ից մինչև 0	90 - 95	14 - 28
Զմեռուկ	2-ից մինչև 3	85 - 90	մինչև 60
Սալոր	մինուտ 0,5-ից մինչև 0	90 - 95	14 - 28
Սմբուկ	7-ից մինչև 10	85 - 90	մինչև 10
Դդմիկ	0-ից մինչև 4	85 - 90	մինչև 60
Գուլիս կաղամբ			
վաղահաս	0-ից մինչև մինուտ 0,5	85 - 90	մինչև 30
ուշահաս	0,5-ից մինչև մինուտ 1,5	85 - 90	180 - 240
Կարտոֆիլ			
վաղահաս	3-ից մինչև 4	85 - 90	14
ուշահաս	3-ից մինչև 4	85 - 90	120 - 240
Գուլիս սոխ	0-ից մինչև մինուտ 1,5	65 - 75	120 - 240
Պազար (ստեպոդին)	0-ից մինչև մինուտ 0,5	90 - 95	120 - 180
Տաքեղ			
կծու	7-ից մինչև 10	85 - 90	30
քաղցր	0-ից մինչև 1	85 - 90	8 - 10
Մաղադանոս	0-ից մինչև 1	85 - 90	30 - 60
Բոդկ	0	90 - 95	21
Ճակնդեղ	0	90 - 95	90 - 150
Դդում	10-ից մինչև 13	70 - 75	60 - 180
Սխտոր	0-ից մինչև մինուտ 1,5	65 - 75	180 - 210
Տոմատ			
կանաչ	11-ից մինչև 13	85 - 90	21 - 28
կարմիր	0	90 - 95	մինչև 14
Ծաղկակաղամբ	0	95 - 98	21 - 28

VI ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

14 Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով

15 Սույն տեխնիկական կանոնակարգը չի տարածվում սեփական արտադրություն-

Այս ստացված և սեփական կարիքները հոգալու համար արտադրվող պահվող և օգտագործվող պտուղ-բանջարեղենի վրա

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան